ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/279

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Հիդրո» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/105» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.05.2022թ.-ի թիվ 26/26-1/9605-2022 գրությամբ «Հիդրո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 18.05.2022թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/858-22 գրության հիման վրա, 25.05.2022թ.-ին «Հիդրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 25.05.2022թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 31.05.2022թ.-ի թիվ 238-Ա հրամանի 1-ին կետը, ընթացակարգի քննությունը 02.06.2022թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

03.06.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/279 համարի ծածկագիրը:

08.06.2022թ.-ին և 24.06.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.06.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.06.2022թ.-ին:

2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը 18.05.2022թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/858-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2022թ-ի ապրիլի 29-ից մայիսի 12-ը, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 10:00-ին տեղի է ունեցել ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/105 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Հիդրո» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 09804085, հասցե՝ ՀՀ, ք. Սիսիան, Շիրվանզադե-5, հեռ.՝ +37494193989; էլ. փոստի հասցե՝ hidro.avet@mail.ru) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ,

մասնավորապես՝ «ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն Հավելված 1-ի, լրացված չէ 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված չէ մասնակցի անվանումը: Ներկայացված հայտում բացակայում է նաև սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը:

*«ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է, մասնավորապես՝ միավոր և ընդհանուր արժեքները ներկայացված են հազարական դրամներով, սակայն նշումը այդ մասին բացակայում է, ինչպես նաև «Էլեկտրականություն» բաժնի 24-րդ կետի՝ «Մալուխ, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 2*2,5մմ2 ՊՊՎԳ», քանակը սխալ է լրացված (82.2 է, 82.8-ի փոխարեն), հետևաբար միավոր արժեքի և քանակի փաստացի ստացվող արտադրյալը և ծավալաթերթով ներկայացված արժեքը չեն համապատասխանում իրար, որի արդյունքում էլ ծավալաթերթ-նախահաշվի «Ընդամենը» տողի փաստացի ստացվող ընդհանուր արժեքը և գնային առաջարկի փաստաթղթով, համաձայն հավելված 2-ի, ներկայացված ընդհանուր գինը չեն համապատասխանում իրար:*

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 05.05.2022թ-ին համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «Հիդրո» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ 10.05.2022թ-ի դրությամբ «Հիդրո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Հիդրո» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Հիդրո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/105» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հիդրո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հիդրո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.06.2022թ.-ի գրությամբ դիմել է «Հիդրո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.05.2022թ.-ի թիվ 26/26-1/9605-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2022/279 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.04.2022թ.-ին հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/105» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հիդրո» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ

բավարարում է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/105» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 29.04.2022թ.-ից 12.05.2022թ.-ը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Հիդրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն Հավելված 1-ի, լրացված չէ 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված մասնակցի անվանումը: Ներկայացված հայտում բացակայում է նաև սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը: Բացի այդ, «Հիդրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է, մասնավորապես՝ միավոր և ընդհանուր արժեքները ներկայացված են հազարական դրամներով, սակայն նշումը այդ մասին բացակայում է, ինչպես նաև «Էլեկտրականություն» բաժնի 24-րդ կետի՝ «Մալուխ, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 2*2,5մմ2 ՊՊՎԳ», քանակը սխալ է լրացված (82,2 է, 82.8-ի փոխարեն), հետևաբար միավոր արժեքի և քանակի փաստացի ստացվող արտադրյալը և ծավալաթերթով ներկայացված արժեքը չեն համապատասխանում իրար, որի արդյունքում էլ ծավալաթերթ-նախահաշվի «Ընդամենը» տողի փաստացի ստացվող ընդհանուր արժեքը և գնային առաջարկի փաստաթղթով, համաձայն հավելավծ 2-ի, ներկայացված ընդհանուր գինը չեն համապատասխանում իրար:

v. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Հիդրո» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը 10.05.2022թ.-ին արձանագրել է, որ «Հիդրո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ չեն կատարվել, ինչով պայմանավորված որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը:

vii. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 18.05.2022թ.-ին թիվ Ե/ՎՈՒ/858-22 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.05.2022թ.-ի թիվ 26/26-1/9605-2022 գրությամբ «Հիդրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.04.2022թ.-ին հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/105» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

29.04.2022թ.-ից 12.05.2022թ.-ը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով «Հիդրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Հիդրո» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովը 10.05.2022թ.-ին շարունակելով նիստը, արձանագրության 5-րդ կետով արձանագրել է, որ «Հիդրո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ չեն կատարվել, ինչով պայմանավորված որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 18.05.2022թ.-ին թիվ Ե/ՎՈՒ/858-22 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 10.05.2022.թ.-ին, սակայն Պատվիրատուի կողմից «Հիդրո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 18.05.2022թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/858-22 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական

լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.05.2022թ.-ի թիվ 26/26-1/9605-2022 գրությամբ «Հիդրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/279 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**